

Ավանդույթները որպես ազգային բնավորության ձևավորման և պահպանման մեխանիզմ

Հասարակության ներկա դինամիկ զարգացումներում մարդու սոցիալական կարգավիճակն ու ճակատագիրը, ըստ էության, դարձել է մի խնդիր, որը կարծես սեփական պատասխանատվությամբ, յուրաքանչյուր սերունդ լուծում է նորովի: Սա իր հերթին անցյալ և ներկա վիճակների միջև գծային կախվածությունը դարձնում է ավելի բարդ: Մյուս կողմից՝ սերունդների դաստիարակությունը մեր օրերում վերածվում է այնպիսի նորանոր հիմնախնդիրների, որոնց լուծումը, ըստ էության, առաջին հերթին պահանջում է հենց իր, հիմնահարցի հետազոտումը: Դժվար է գտնել մարդկային հանրության մեկ այլ ձև, որն այնքան երկարակյաց գտնվեր՝ ուղեկցելով ողջ մարդկային պատմությունը, և այնքան տարակարծությունների տեղիք տար իր բնույթի, դերի և նույնիսկ իր լինելու կամ չլինելու հարցերում, որքան ազգայինը: Համընդհանուր հաղորդակցության շնորհիվ ազգամիջյան շփումները դարձել են սովորական երևույթ: Շփվելով համոզվում ենք, որ տարբեր են ազգային բնավորության գծերն ու սովորույթները: Սակայն, եթե կան ազգային բնավորության տարբեր հատկություններ, արդյոք ինչպե՞ս է հնարավոր դառնում այդ շփումը, ինչպես՞ են ձևավորվում այդ տարբեր բնավորության գծերը:

Բնական ռեսուրսները, աշխարհագրական դիրքը, ժողովրդագրական կացությունը ցանկացած ազգի կամ պետության համար կարևոր գործոններ են: Տարբեր ազգեր ապրում են միևնույն հետաքրքրություններով. բոլորն էլ աշխատում են, ապահովում են սնունդ, հագուստ, երեխաներ են դաստիարակում, հանգստանում են և այլն: Գործունեության այս ձևերը բնորոշ են ողջ մարդկության համար: Սակայն յուրաքանչյուր ազգի համար գործունեության այդ ձևերը կենցաղում տարաբնույթ են: Ազգի ձևավորման և զարգացման վրա ազդում են ոչ միայն արտաքին գործոնները /կլիման, շրջապատող միջավայրը/, այլև ներքին՝ օրգանական ուժերը: Կլիման և շրջակա միջավայրը ազդում են ազգային բնավորության ձևավորման վրա, բայց ինքը՝ մարդը ընդունակ է փոխելու այդ միջավայրը իր բանականությամբ: «Եվրոպան, ինչպես նաև այլ շրջաններ եղել են ճահճոտ մի անտառ, իսկ հիմա այդ անանցանելի հատվածը նոսրացել է, իսկ դրա հետ միասին փոխվել են նաև աշխարհը ստեղծողները: Եթե չլիներ կարգավորվածությունը,

եթե չլիներ արվեստը, ապա Եգիպտոսը կծածկվեր Նեղոսի ճահճուտներում: Բայց եգիպտացիները պայքարեցին կլիմայի դեմ: Մարդիկ աստիճանաբար իջնելով բարձունքներից, կացարան գտան երկրի վրա, փոխեցին կլիման»¹: Հերդերը նշում է, որ յուրաքանչյուր ազգ տարբերվում է իր տեղով, ժամանակով, ներքին բնավորությունով, յուրաքանչյուրը, անկախ մյուսներից, իր մեջ կրում է իր կատարելությունը:

Ավանդույթները այն կարևոր գործոններն են, որոնք նպաստում են ազգային բնավորության ձևավորմանը: Որոշ գիտնականներ ավանդությունները նույնացնում են առասպելների հետ, ելնելով այն փաստից, որ երկուսի մեջ էլ արտացոլված են բնության և հասարակական կյանքի միևնույն առարկաներն ու երևույթները: Հաշվի չի առնվել այն հանգամանքը, որ առասպելների մեջ առկա է բնության և հասարակական կյանքի դիցաբանական ընկալումը, որ այստեղ մարդը իր երևակայության մեջ և այդ երևակայության միջոցով անգիտակցական և պատկերավոր ձևով մարմնավորել ու աստվածացրել է իր համար անըմբռնելի և իր վրա իշխող մութ ու տարերային ուժերը: Մինչդեռ ավանդույթներում աշխարհձանաչողությունը ունի ավելի գիտակցական ու իրականության մոտ բնույթ, և առաջնայինը ոչ թե աստվածներն են, այլ մարդիկ՝ բնության և հասարակական կյանքի հակոտնյա ուժերի դեմ մղած իրենց պայքարով, աշխատանքային գործունեությամբ և պատմական ճակատագրով: Ավանդույթները համապատասխան պատմական, սոցիալական, էթնիկական, կենցաղային ու այլ կարգի գործոնների ծնունդ են: Ավանդույթների գլխավոր դերը համապատասխան աշխարհագրական, պատմական, կենցաղային, կրոնական ու այլ կարգի տեղեկություններ ու գիտելիքներ հաղորդելն է: Դրանց ստեղծումը դժվար է սահմանափակել այս կամ այն դարաշրջանով: Նրանք ծնվել ու գոյատևել են պատմությանը համընթաց: Ավանդույթները նպատակային ու ճանաչողական բնույթի ստուգաբանական, բացատրական և վարքաբանական ստեղծագործություններ են, որոնք ժողովրդի կողմից ընկալվում են իբրև հեռու ու մոտիկ անցյալում եղած ու կատարված իրերի ու երևույթների, դեպքերի ու դեմքերի վերաբերյալ ճշմարտացի հաղորդումներ ու հուշապատումներ: Ժողովրդական ավանդույթները ծագել են իրականությունն ըմբռնելու գործնական անհրաժեշտությունից: Դրանց մեջ դրոշմված է տվյալ ժողովրդի

¹Гердер И.Г. Идеи к философии истории человечества. М., «Наука», 1977, с.181.

հավաքական կենսափորձն ու գիտելիքները, նրա ճաշակն ու ըմբռնումները, դատողություններն ու գնահատականները: Նրանց միջոցով յուրաքանչյուր նոր սերունդ գաղափար է կազմում իր ապրած բնաշխարհի առանձնահատկությունների, հարազատ ժողովրդի պատմական անցյալի, մոտիկ ու հեռավոր ազգերի հետ նրա շփման ու փոխհարաբերությունների մասին: Դրանք նպաստում են ժողովրդի պատմական գիտակցության ձևավորմանը, ամրապնդում են նրա աշխատանքային կենսափորձն ու անցյալի հիշողությունները: Ավանդույթը սոցիալական և մշակութային ժառանգություն է, փոխանցված նախնիների կողմից, որը պահպանվում է էթնոսներում, հասարակության մեջ, սոցիալական խմբերում: Բայց եթե այսպես սահմանենք ավանդույթը, ապա այն համընկնում է ժառանգության հետ: Շատ հետազոտողներ կարծում են, որ ավանդույթը այն չէ, ինչ փոխանցվում է , այլ հենց ինքն է մշակութային ժառանգության փոխանցողը: «Այս դեպքում ավանդույթը փոխանցման միջոց է հաշվի առնելով պատմական հաջորդականությունը. մեծից դեպի փոքրը, սերնդից-սերունդ ստեղծելով վարքի նորմերը, այն ամենը ինչը կազմում է մշակույթի կմախքը»²: Ավանդույթների կարևոր հատկությունն այն է, որ դրանք ընտրում են այն արժեքները, որոնք չի կարելի կորցնել: Ավանդույթները ոչ միայն պարունակում են վարքի նորմեր, հմտություններ ու հասկացություններ, այլ նաև այն սիմվոլիկ մենտալ մտքերի շրջանը, կարծրատիպերն ու հարաբերությունները, որոնց միջոցով ապահովում է էթնիկ խմբի անդամների կապը իրենց լեզվի և հաղորդագրության ոչ բանավոր եղանակների հետ: Ավանդույթները ներառում են զգայության, մտածողության, վարքի մոդելները, բացի դրանից նաև նորմեր, հմտություններ, սովորույթներ, մշակութային ձեռքբերումներ և այն ամենը, որոնք արժեք են ներկայացնում էթնոսի անդամների համար, ինչպես նաև սերնդից-սերունդ փոխանցման եղանակները: Ավանդույթները ժողովրդի ամբողջ ժառանգությունը չեն, այլ դրա մի մասն են, այն մասը, որը էթնոսի անդամները արժևորում են /դրական կամ բացասական/: Ավանդույթները այդպիսի գնահատման գործընթացի արդյունքն են, միջսերնդային փոխանցման մեխանիզմ: Միայն այն դեպքում, երբ ավանդույթը դիտում ենք որպես արժեք, այն հանդիսանում է մշակութային փոխանցման բովանդակային ձև: Այս դեպքում կարող ենք խոսել ավանդույթների մասին, երբ անցյալի ժառանգության տարրերը հանդիսանում են ոչ միայն գրքերի տեղեկություններ, այլ մեր կենցաղի արդիական տարրեր: «Ավանդույթը

² Арутюнов С.А. Народы и культуры: развитие и взаимодействие. М., «Наука», 1989. с.160.

ոչ միայն սոցիալական փաստ է՝ օբյեկտավորված հասարակական ինստիտուտներում և սովորույթներում, այլև անցյալի ներկայությունն է մեր մեջ»³: Մյուս կողմից, ավանդույթը որոշ իմաստով առանձնանում է անհատից, այն, մի կողմից, մեր մեջ է, մյուս կողմից՝ ոչ /քանի որ ավանդույթը չի պատկանում անհատին, այլ խմբերին, ժողովուրդներին/: Հենց կոլեկտիվների ավանդույթներին, որպես արժեք տված այս հավանության մեջ է ավանդույթների ազդեցությունը էթնոսի ցանկացած անդամի վրա: Իր արժեքային ուժի շնորհիվ ավանդույթը փոփոխում է արժեքները: Այդ պատճառով էլ «ժառանգության գետի վրա ի հայտ են գալիս և անհետանում են ավանդույթների կղզիները»⁴:

Ցանկացած ավանդույթ մարդկային փորձի ամբողջության մի մասն է: Մարդը փոխվելով փոխում է նաև ավանդույթը: Ավանդույթը հաստատուն լինելով հանդերձ զարգանում և փոխվում է դարաշրջանի, սոցիալ-պատմական պայմանների և ազգերի մենտալիտետի հետ: Ավանդական պատկերացումներից անբաժան է վերափոխությունը: Նախորդ դարաշրջաններում այս գործընթացը ավելի դանդաղ էր ընթանում, իսկ այժմ այն տեղի է ունենում մեկ սերնդափոխության ընթացքում: Ավանդույթների վերափոխումը կարող է կապված լինել պետության, ներքին ճնշման, գինվորական ճնշման, էմիգրացիայի և այլ սոցիալ-քաղաքական գործոնների հետ: Հաճախ ավանդույթը անցնում է առանց վերադարձի: Այդ ժամանակ խոսքը գնում է ավանդույթի կորստի մասին: Դրա համար կարող են պատճառ հանդիսանալ ասսիմիլյացիայի/ծուլման/ գործընթացները, նորարարությունը, արևելյան մշակույթի վրա արևմտյանի ազդեցությունը և այլն: Ժամանակակից մարդը գտնվում է մշտական գործընթացի մեջ սեփականի և օտարի ընտրության միջև: Ավանդույթը ամեն դեպքում ենթադրում է ընտրություն, փնտրում և հայտնագործում: Յուրաքանչյուր սերունդ նորից է սկսում նախորդ սերնդի մեկնաբանությունը և հենց սրանում է կայանում էթնոսի ակտիվ փոփոխությունը և ազգի ձևավորումը: Յուրաքանչյուր ազգ ինքն է մոդելավորում իրեն ավանդույթներից վերցնելով այն ամենը, ինչը համապատասխանում է ժամանակակից իրականությանը և ժողովրդի մենտալիտետին:

Ազգային բնավորությունն ուսումնասիրելիս առանձնացվում են մի քանի մեթոդոլոգիական մոտեցումներ. *կենսաբանական*, երբ ազգային բնավորությունը որպես ի

³ Шацкий Е. Утопия и традиция. М., «Прогресс», 1990. с.312.

⁴ Шацкий Е. Утопия и традиция. с.328.

ծնե, ժառանգաբար փոխանցվող է /Ա.Բաստին, Կ.Դ.Կավելին, Մ.Կովալևսկի, Մակ-Լենան, Լ.Մորգան, Է.Թայլոր/, *էթնոգրաֆիկական*, որը հիմնված է կենցաղի նկարագրության վրա, ազգի սովորույթների և ավանդույթների, ընտանիքի վարքի, երեխաների դաստիարակության, ծերերի խնամքի և այլն /Մ.Միդ, ավանդաբանություն/, *հոգեբանական*՝ բազմաթիվ հետազոտությունների միջոցով թափանցել անհատի ներքնաշխարհի /Լ.Վիգոտսկի, Է.Ֆրոմմ/, *լինգվիստիկական և նշանային*, որոնք իրենցից ներկայացնում են լեզվի, մտքերի արտահայտման, մտածողության եղանակների, տրամաբանության մոդելների համեմատական վերլուծություն /Կ.Լեվի-Ստրոսս/, *պատմա-մշակութային*՝ ժամանակի և տարածության ազգային ընկալում, ավանդույթների վերլուծություն, վարքի կանոններ, մտածողության եղանակներ /Ռ.Բենեդիկտ, Գ.Գաչև, Ն.Լոսսկի. Ա.Լուրիա, Գ.Շպեդ/, *սոցիալ-տնտեսագիտական*, որը վերլուծում է հասարակական տնտեսագիտական կառուցվածքները, ազգային հիմնային մեխանիզմները և դրանց զարգացումը:

Հարյուրամյա պատմությունը ցույց է տալիս, որ ժողովրդի բնավորության ձևավորման համար կարևոր պայման են հանդիսանում բնական պայմանները և աշխարհագրական դիրքը: «Տաք կլիմայական պայմաններում ապրող ժողովուրդները երկչոտ են, ցուրտ կլիմայական պայմաններում ապրողները՝ խիզախ են»⁵, - գրում է Շ.Մոնտեսքյուն: Իսկ Հեգելը նշում է. «Կլիմայի անփոփոխ լինելը, տվյալ երկրի յուրահատկությունները, մշտական բնակության վայրը, տվյալ ժողովրդի մոտ ձևավորում են կայուն բնավորության գծեր: Հատկապես կարևոր է կապը ծովի հետ: Աֆրիկայի ներսում, որը շրջապատված է բարձր լեռներով, խուլ ցանկապատված է ծովից, այս ազատ տարերայնությունը նպաստում է, որպեսզի տեղացիների ոգին մնա չբացահայտված, չկա ազատության ձգտումը, չկա հակադրությունը ստրկության հանդեպ»⁶:

Ժամանակի ընթացքում ձևավորվեց աշխարհագրական դետերմինիզմի տեսությունը, որտեղ մարդը և մարդկային հանրությունը դիտվում էին որպես արտաքին աշխարհի դետերմինացված ընդհանրություն: Իհարկե, կլիման, բնական պայմանները նպաստել են մարդկանց գործունեությանը, նրանց մշակույթի ձևավորմանը: Ն.Ա.Բերդյակը նշում է «ռուսական ոգու» վրա ռուսական անհուն, ընդարձակ տարածությունների ազդեցության մասին: «Ռուսական հոգեբանության մեջ մտել են

⁵ Гнатенко П.И. Национальный характер; мифы и реальность. М., 1981., с.8.

⁶ Гнатенко П.И. Национальный характер; мифы и реальность.с.10.

ռուսական պետության անսահմանափակությունը և ռուսական դաշտավայրերի անծայրածիրությունը: Ռուսական ոգին մեծ է, այն չի տեսնում սահմաններ, և այս անսահմանափակությունը ոչ թե ազատում, այլ ստրկացնում է նրան»⁷: Բերդյակը գրում է նաև այն մասին, որ Գերմանիայի ոչ այնքան մեծ տարածքը ծնել է գերմանացիների մեջ կարգավորելու ցանկությունը, ամեն բան իր տեղը դնելու, ի տարբերություն ռուսների, որոնց հայրենիքի անծայրությունը չի դաստեարակել նրանց մեջ չափի զգացողություն և սեփական ճակատագրի հետ վարվելու ունակություն: Յուրաքանչյուր ժողովրդի մշակույթում կան համընդհանուր կարծրատիպեր և յուրաքանչյուրը փորձում է իր մշակույթը ձևավորել այդ կարծրատիպերով: Մարդու հոգեբանությունը և ժողովրդի հոգեբանությունը դա սոցիոմշակութային ստեղծագործության գործընթաց է:

Աշխարհի էթնիկ պատկերը հասանելի է յուրաքանչյուր ավանդական սոցիումի համար, կեցության բոլոր տեսանկյունները կառուցվում և շարժուն ձևով վերաբերվում են մարդուն: Ազգության մեջ սինթեզված են էթնիկականը /լեզու, մատերիական մշակույթի ձևեր, ազգային արվեստ, ավանդույթներ, սովորույթներ, մարդկանց հոգեբանական տեսանկյուններ/ և սոցիալականը /իրավական հարաբերություններ, քաղաքական ինստիտուտներ, հասարակության զարգացման տնտեսական ոլորտ/: Հասարակության սոցիալական զարգացումը ավելի կառուցվածքային է: Ժամանակակից հասարակությունը կազմված է բազմաթիվ սոցիալական աշխարհներից, մշակութային բնագավառներից: Նրանում միացվում են մշակութային տարրերը, ընդհանրացվում են նշանային համակարգերը, որոնք հանդես են գալիս որպես վարքի կարգավորման արժեքային-նորմատիվային կարգավորիչներ: Ընդհանուր նշանակություն ունեցող համակարգերի համար, սկսած նախնական սոցիալիզացիայից, այն կարող է հանդես գալ որպես բազային նշանային միջավայր: Այդ պատճառով, եթե էթնոսի ավանդույթները փոխանցվում են, ապա միայն մասսայական հաղորդակցության և սոցիալական ինստիտուտների միջոցով: Այս ամենի հետ միասին էթնիկությունը զգայական կատեգորեա է: Էթնիկությունը վերապրվում է, ընդ որում այս ապրումները կարող են լինել բոլորովին իռացիոնալ, կոլեկտիվ անգիտակցականի ոգում»⁸:

⁷ Бердяев Н.А. Избранные труды. М., 1996. с.234.

⁸ Юнг К.Г. Архетип и символ. М., 1991, с.126.

Անշուշտ վիճաբանելու տեղիք չի տալիս այն փաստը, որ *լեզուն այս կամ այն էթնոսի կարևոր հանգամանքն է*: Որպես կարգ, մարդիկ, որոնք պատկանում են միևնույն ազգին, խոսում են մայրենի լեզվով, բայց կան ինքնուրույն կազմավորված տարբեր ազգեր, որոնք խոսում են միևնույն լեզվով /օրնակ՝ անգլերենով խոսում են ոչ միայն անգլիացիները, այլ նաև 180մլն. ամերիկացիներ, 5,8 մլն. շոտլանդացիներ, ինչպես նաև անգլո-ավստրալացիները, անգլո-գելանդացիները և այլն/, իսպաներենով խոսում են ոչ միայն իսպանացիները, այլև՝ մեքսիկացիները, կոլումբիացիները, պերուացիները և այլն: Այսպիսի իրադրության հիմքը պատմական է, չնայած պատճառները բազմազան են. դա կարող է լինել միգրացիան, աշխարհագրական դիրքը, առավել հզոր ազգերի տնտեսական և մշակութային իշխանությունը ավելի թույլ ազգերի վրա: Հանդիպում է նաև հակառակ պատկերը, երբ գոյություն ունեն այնպիսի ազգեր, որոնց տարբեր խմբերը խոսում են տարբեր լեզուներով՝ օրինակ՝ շոտլանդացիները: Ընդհանուր առմամբ նրանք խոսում են անգլերեն, բայց կան խմբեր, որոնք խոսում են այլ լեզվով /կելտերեն/: Օրինակ կարող ենք բերել նաև գերմանացիներին, որոնք ունենալով միջնադարից ժառանգած անջատ պետական կազմավորումներ և բաժանված լինելով տարածքային-ազգագրական խմբերի, որոնք ունեին իրենց ուրույն բարբառներն ու խոսվածքները, կենցաղային տարբերությունները, այնուհանդերձ նրանք ունեն ընդհանուր ազգային գրական լեզու և նրանով ստեղծված գրականություն: «Նրանք ունեն հասարակական կյանքի պետա-իրավական կազմակերպման զարգացած տեսություն, վերջապես՝ ազգային մշակույթի ժառանգորդունն ապահովող գիտակրթական համակարգ, ճանաչված ազգային դպրոց»⁹: Լեզուն հանդես է գալիս թե որպես ապրելակերպ, թե որպես մտածելակերպ և թե որպես աշխարհընկալում: Առավելապես լեզվի ազգային տարբերակում է տրված լեզվական ստեղծագործության ողջ հարստությունը: Իբրև ազգային ընդհանրության հիմնական բաղադրատար՝ լեզուն էթնիկական պատկանելիության, կրոնի, ժողովրդի պատմական ու սոցիալական հիշողության և տարածքային ընդհանրության հետ հատուկ պայմաններ է ստեղծում ազգային ինքնագիտակցության համար: Հետևաբար լեզուն կարևոր հանգամանք է էթնոսի համար, սակայն այն ամբողջությամբ չի բացահայտում էթնոսը:

⁹ Հ.Ա.Գևորգյան, Փիլիսոփայություն.պատմություն. մշակույթ, ՀՀ ԳԱԱ «Գիտություն»,Ե., 2005, էջ.474:

Ակսած 20-րդ դարի 70-ական թվականներից ուսումնասիրվել է էթնիկական ինքնության հիմնախնդիրը: Ի՞նչ ձևով է հանդես գալիս էթնիկական հիմնահարցը ժամանակակից պայմաններում: Ժամանակակից շատ մտածողներ էթնիկությունը փոխակերպել են այլ՝ սոցիալական, քաղաքական, հոգեբանական և տնտեսագիտական երևույթների հետ: Անհատի կյանքը առաջին հերթին պայմանավորված է սոցիալական կեցության, օրենքների, ինստիտուտների, քաղաքականության ոչ էթնիկ բնութագրով /կրթության մակարդակով, զբաղվածությամբ, եկամուտներով և այլն/: Էթնիկության հիմնախնդիրը չի գործում ոչ համեմատության և ոչ էլ փոխադարձ կապի ժամանակ, միայն մտնելով այլ խմբի մեջ այն կարող է ցույց տալ իր յուրահատկությունը՝ անհատականությունը: Սա էթնիկության հիմնական դրսևորումն է, քանի որ կարող են փոխակերպվել խմբերի մշակութային և կազմակերպչական բնութագրերը: Կարող է պահպանվել էթնիկական ինքնությունը նույնիսկ առանց լեզվի, տարածքի, մշակույթի հաստատուն տարրերի: Էթնիկությունը ինքնության կատեգորեա է և անհատական-անձնական մակարդակի վրա հանդես է գալիս որպես հատուկ ձև: Էթնիկության դրսևորման աստիճանը կախված է այն բանից, թե մարդն ինչպես է ինքն իրեն առանձնացնում: Էթնիկական ինքնությունը հիմնված է հասարակության մշակույթի վրա: Գ.Դե Վոսի առանձնացմամբ «էթնիկ խումբը ինքնագիտակցող մարդկանց խումբ է, որն ունի ավանդույթների ընդհանուր աղյուսակ, չառանձնացվելով մյուսներից, որոնց հետ նրանք շփվում են: Այս աղյուսակները ընդգրկում են կրոնական հավատ, լեզու, պատմություն, ընդհանուր նախնիներ, ընդհանուր պատմական հայրենիք»¹⁰: Ըստ Ս.Էնլոի «մշակութային հիմքը կազմված է հավատալիքներից և արժեքներից, որոնք թույլ են տալիս կեղծը տարբերել ճշմարիտից»¹¹: Ամեն դեպքում ժամանակակից գիտնականները էթնիկության մեջ մտցնում են և օբյեկտիվի /մշակութային բազա/ և սուբյեկտիվի /ինքնանկարագրություն/ բնութագիրը: Կարևոր է նաև հաշվի առնել այն հանգամանքը, թե ինչպիսի աշխարհագրական կամ մշակութային տեղանքում է հայտնվել տվյալ ժողովուրդը:

Սովորույթները, ծեսերը, ավանդույթները, էթնոսի կյանքի ձևերը ծագում են պատմության տարածությունում և մշակույթում: Ազգերի մշակութային յուրահատկությունը չի կարելի հասկանալ միայն էթնիկ իմաստով, որպես հոգևոր և մատերիական մշակույթի

¹⁰ De Vos G. Role of Ethnicity in Social History, Calif.,1973,p.9.

¹¹ Enloe S. Ethnic Conflict and Politic Development.Boston,1973,p.15.

ավանդական, կենցաղային յուրահատկություն, որը ձևավորվել է անցյալում: Խոսքը գնում է այս կամ այն ազգի մշակութային ձեռքբերումների մասին ամբողջությամբ, ինչպես նաև նրա ազդեցությունը համաշխարհային մշակույթի վրա: Մշակույթը առաջանում է, երբ անհրաժեշտություն է լինում հաջորդ սերնդին փոխանցելու փորձը, որը կուտակվել է նախորդ սերնդի կողմից: Իսկ սա նշանակում է, որ այն գոյություն ունի միայն հաղորդակցության ներսում: Եվ քանի որ մենք բոլորս այս կամ այն էթնոսի ծնունդ ենք, ապա մշակույթը իսկզբանե էթնիկական է: Ազգերը կարող են գոյություն ունենալ ապրելով միևնույն տարածքում, ունենալով ընդհանուր տնտեսական բազա և խոսելով միևնույն լեզվով, բայց չկա և չի կարող լինել երկու ազգեր միևնույն մշակույթով: Ամեն մի ազգի կենսագործունեությունը ընթանում է կեցության համեմատաբար նույն պայմաններում, ինչը առաջ է բերում ազգային միասնության, հայացքների ընդհանրության և վարվելակերպի միաձևություն: Երբ ազգը կորցնում է իր մշակութային յուրահատկությունը, այն դադարում է գոյություն ունենալ որպես առանձին էթնոս: Այդպես է պատահել շատ ժողովուրդների հետ, երբ նրանք չնայած կենսաբանորեն չեն ոչնչացվել, բայց դուրս են եկել պատմության թատերաբեմից, որովհետև մշակութային հարաբերություններով մխրձվել են այլ, ավելի ուժեղ, էթնոսի մեջ: Հետևաբար մշակութային յուրահատկությանը պետք է նայել որպես էթնոսի հիմնական հատկանիշի: Այնուամենայնիվ կա հիմնական սկզբունք, որը միավորում է մասսաներին մի էթնիկական խմբի մեջ: Ղա ազգի բնավորությունն է, որը հաճախ անվանում ենք ազգային ոգի: Ազգային բնավորության մեջ ընդհանրացվում են մի ամբողջ ազգի տարածքային, հասարակական-պատմական և մշակութային առանձնահատկություններ: Առաջին հերթին ազգային բնավորության բնութագիրը և ազգային մշակույթը առանձնանում են պատմականորեն: Հայ ժողովրդի պատմությունն ընթացել է իր պատմական հայրենիքում և ծավալվել է մշակույթի բազմազան ձևերի մեջ: «Հայաստանը մի երկիր է, որն իր նկարագիրը ստացել է հայ ժողովրդի բազմադարյան աշխատանքով և ինքն էլ ձևավորել է հայ մարդուն՝ նրա բնավորությունը, վարքագիծը և այլն: Մարդկային հանճարի ստեղծագործությունները մերված են հայոց բնաշխարհին՝ որպես նրա շարունակություն և լրացում, անընդմեջ, դար առ դար, հայ ժողովրդի անցած բոլոր պատմական ժամանակաշրջաններին բնորոշ առանձնահատկություններով»¹²: Ազգի բնավորության

¹² Հ.Ա.Գևորգյան, Փիլիսոփայություն.պատմություն. մշակույթ, էջ.429-430:

ձևավորման վրա ազդում է նաև սոցիոմշակութային գործոնը: «Սոցիալական երևույթի էությունը մարդկանց փոխկապակցվածության մեջ է, որը ձևավորված է ոչ թե պատահականորեն, այլ որոշակի մշտական խմբում»¹³: Սա գիտակցված փոխկապակցվածություն է, այսինքն՝ կոլեկտիվ փորձ /զգացմունքների, տպավորությունների փոխանակում/: Այս կոլեկտիվ սոցիալական փորձը փոխանցվում է սերնդե-սերունդ, ընդ որում յուրաքանչյուր նոր սերունդ ավելացնում է նոր պատմական, մշակութային հասկացություններ, որոնք պատկանում են տվյալ սերնդին: Յուրաքանչյուր ազգի մշակույթ, նրա կյանքի բնույթն ու ձևը տարբեր են տարբեր ժամանակաշրջաններում: Այսպիսի տարբերություններ հեշտ է նկատել նաև կենցաղում: Օրինակ անգլիացիների մոտ մինչև վերջին ժամանակները անիմաստ էին համարում հոսող ջրով լվացվելը, նրանց համար անհրաժեշտ էր խցանով փակված լվացարան, չէ՞ որ նրանց նախնիները լվացվել են սպարտակցիների նման, երեսը շրջելով և մխրձելով թասի ջրի մեջ:

Փիլիսոփայության մեջ /Հուսեռ/ առանձնացվում է երկու տիպի ավանդույթ. պասսիվ և ակտիվ: Պասսիվը՝ որոշակի կանոնների խումբ է, որի շնորհիվ մարդը ապրում է ինչպես բոլորը, որովհետև այդպես է ընդունված նրա խմբում: Բայց կա մեկ այլ մոտեցում, որով մենք կարող ենք ավանդույթը վերլուծել, վերաստեղծել, լրացնել նոր բովանդակությամբ: Այդ է պատճառը, որ ժամանակակից հասարակության մեջ չկա անվիճելի ավանդույթ: Այստեղ հարց է ծագում. արդյո՞ք ավանդույթը անպայման պետք է կապ ունենա անցյալի հետ: «Իհարկե ճիշտ չէ, որ նախկին ռացիոնալիստները պահանջում են ավանդույթից «պատմական ստույգություն» այն իմաստով, որ նրան ստեղծող օրինակները անցյալում եղել են այնպիսին, ինչպես ներկայում: Երբ անկախ Գանան մխրձվում է հռոմեական անցյալի մեջ, մենք հավանական է գործ ունենք հնարանքի հետ. Երբ ժամանակակից Մալին փնտրում է իր սկիզբը միջնադարյան պետության մեջ այդպիսի անվանումով, իրադրությունը այլ է, որովհետև այդպիսի պետություն գոյություն ունեցել է»¹⁴: Բայց ինչու՞ թե այս և թե մյուս դեպքում մենք գործ ունենք ավանդույթի հետ: Որովհետև երկու ժողովուրդներն էլ հավատում են իրենց կեցության հենց այս նախահիմքերին և դրա մեջ փնտրում են իրենց ազգային ինքնության և ազգային արժանապատվության

¹³ Сорокин П. Человек. Цивилизация. Общество. М., 1992, с. 531.

¹⁴ Шацкий Е. Утопия и традиция. М., 1990. с.352.

հաստատումը: Գլխավորն այստեղ տվյալ ժամանակում գործող ավանդույթն է: Հենց այդ հավատն է, որ ավանդույթին դարձնում է դարերով փորձված անցյալի օրինակ, որի վրա հենվում է ներկան:

Ավանդույթի բնորոշ հատկությունը, նրա կապվածությունն է անցյալի հետ: Կարևորն այն է, որ այդ անցյալը միշտ վերականգնվում է ներկայում: Սրանում է ավանդույթի առասպելական բնույթը: Ժողովուրդն իր ստեղծած առասպելներում, հեքիաթներում, վեպերում, երգերում ու առածներում, իր գոյի և գիտակցության բազմակողմանի ու խորը տեղյակության հիման վրա արտացոլել է իր ժամանակաշրջանի սոցիալ-դասակարգային հարաբերությունների, կենցաղի, արծածել է պատմական դեպքերի ընթացքով ժողովրդի առաջ կանգնած կարևոր խնդիրները: Մարդը կամ ժողովուրդը երբեք ռեալ անցյալը չեն հիշում, նրանք միշտ վերաստեղծում են այն: Անցյալը միշտ ճանաչվում է ներկայով և այն միշտ կապված է ավանդույթի մեջ ժամանակակից արժեքների ներդրմամբ:

Կարևոր հատկություն է նաև ավանդույթի հասարակական բնույթը: Ավանդույթները տարածվում և ընդունվում են հասարակության մեծ մասի կողմից, որպես անցյալից եկող ճիշտ ուղղություն ցույց տվող ուժ: Իհարկե կարևոր դեր են խաղում դրանց անանուն և բնահատուկ լինելը: Ցանկացած ավանդույթ, եթե այն գալիս է նույնիսկ կոնկրետ մարդուց միշտ ենթադրում է տվյալ անհատի անվան միախառնվելը շատ թվով մարդկանց հետ, որոնք ընդունում են այդ ավանդույթը: Այս իմաստով արվեստի ավանդական մասը անանուն ժողովրդական բանավոր խոսքն է: Բնահատկությունն այն է, որ նա ընդունվում է այս կամ այն ժողովրդի կողմից: Այս իմաստով Լ.Գ.Իոնինը շատ լավ օրինակ է բերում. «Ինչո՞վ է տարբերվում անցյալ դարի 80-ական թթ կառուցված եկեղեցին և «ռուսական ոճով» վերնատունը: Գործի բերումով ոչնչով: Չէ՞ որ ներկա կառույցների համար չեն ասում, որ դրանք կառուցված են «ռուսական ոճով», այլ ասում են, որ դրանք ավանդական ռուսական ճարտարապետական կառույցներ են: Խոսել ոճի մասին կարելի է այն ժամանակ, երբ կա ընտրություն, երբ նկարիչը կարողանում է ընտրել իր արտահայտման եղանակը»¹⁵: Բայց ավանդույթը չի տալիս այդ ազատությունը: Նկարիչը ստեղծագործելով ավանդույթի շրջանակներում, երբեք չի զգում այդ ազատության կանխարգելումը: Հաճախ է ավանդույթը փոխարինում մարդու և հանրության ինքնուրույն մտածելակերպին. շատ բան մենք անում ենք ավանդույթի ուժով

¹⁵ Ионин Л.Г. Социология культуры. М.,ГУ ВШЭ, 1995. с.166-167.

/որովհետև այդպես ընդունված է և եկել է դարերով/: Սկսած ռենեսանսի դարաշրջանից ավանդույթը կամաց կամաց սկսում է ռացիոնալիզացվել:

Ազգային յուրահատկության մասին խոսքը գնում է այն ժամանակ, երբ սկսում ենք համեմատել երկու տարբեր ազգերի: Եվ այն ամենը ինչ այս համեմատության ժամանակ չի համընկնում /լեզուն, վարքը, կենցաղը, արվեստը/ ազգային յուրահատկությունն է: Յուրաքանչյուր ազգի էթնիկական պատկերը անկրկնելի է: Բայց առանձնացնել զուտ մաքուր յուրահատկությունը հաջողվում է շատ հազվադեպ: Իսկ այն ինչ հաջողվում է մշակույթի ոչ այնքան կարևոր տարրերն են: Սա է ազգային բնավորության պարադոքսներից մեկը: Առաջին հայացքից թվում է թե նա յուրահատուկ է և անկրկնելի, գիտակցությունը վերացարկում է այն, հետո պարզվում է, որ դա մի քանի էթնոսների բնորոշ հատկություններ են: «Գոյություն ունի տարբեր առասպելներ էթնիկ, ռասսայական խմբերի և սոցիալական դասերի ընդունակությունների և խառնվածքների տարբերությունների մասին: Իրականում չկա հիմք ասելու, որ ենթադրվող տարբերությունները իրենց մեջ ներառում են մշակութային և պատմական տարբերություններից դուրս ինչ-որ բան», - գրում է հանրաճանաչ գենետիկ Լևանտինը¹⁶: Սրանից ելնելով, մենք կարող ենք ասել ժողովուրդների հավասարության մասին: Այն միտքը, որ բոլոր ազգերը հավասար են չի նշանակում, որ բոլորը միանման են: Առաջին հերթին այն, որ նրանց մշակույթը տարբեր է: «Բոլոր արժեքները ազգերի համար միևնույնն են /կյանքը, հացը, լույսը, տունը, ընտանիքը և այլն/, բայց դրանք իրենց տրամադրության տակ ունենում են տարբեր հարաբերություններում: Սա յուրահատուկ կառուցվածք է բոլոր ազգերի համար և այն կրում է ազգային բնույթ, այլ կերպ ասած՝ աշխարհի մոդելը»:¹⁷

«Եվրոպայի մայրամուտը» գրքում Շպենգլերը հաստատում է, որ ազգի մշակույթը կենդանի օրգանիզմ է: Այն անցնում է նույն տարիքային փուլերը, ինչ-որ մարդն է անցնում: Կանտի կարծիքով «վարքի անսովոր գրգռվածությունը ազգին բնորոշ ընդհանուր բնութագիր է»: Կանտը անցկացնում է կոնկրետ ազգերի բնավորության վերլուծություն: Օրինակ՝ ֆրանսացիները բարձրաճաշակ են, բարեհամբյուր: «Եթե նայենք հակառակ տեսանկյունով, ապա կանխամտածված սկզբունքների ոչ բավարար զսպվածությամբ և

¹⁶ Р.Левонтин. Субкультуры и этносы в художественной жизни. С-Пб., 1996,с.41.

¹⁷ Гачев Г. Национальные образы мира, М.,Сов. Писатель, 1988.с. 46-47.

թեթևամտությամբ: Այս ձևերում նրանք իրենց լավ էին զգում, այստեղ իր ուրույն տեղն ունի նաև ազատության վարակիչ ոգին»¹⁸: Բնութագրելով իսպանացիներին, Կանտը ուշադրություն է դարձնում նրանց «հանդիսություններին»: Սրա տակ նա հասկանում է սեփական արժանապատվությունը և ազգային հպարտությունը: Գերմանացիները բնութագրվում են, որպես չափից ավելի մեթոդին հետևողներ և մանրախնդիր: Սա պայմանավորված է ազգի հոգևոր տրամադրվածությամբ, հնարավոր է, որ դրա պատճառը լինի աշխարհագրական կամ ժառանգական, ինչպես նաև գերմանական հասարակական կազմակերպման շնորհիվ: Կանտի կարծիքով սոցիոմշակութային, ինչպես նաև, բնական պատճառների սինթեզը ընկած են ազգային բնավորության հիմքում: Իր հերթին Հեգելը բացահայտում է ցանկացած ազգի կարևոր յուրահատկություններից մեկը. ժողովուրդն այն ժամանակ է ժողովուրդ, երբ ինքնաճանաչում է իրեն: Կարծում են առաջին հերթին անհրաժեշտ է ուսումնասիրել ազգերի սոցիալական յուրահատկությունները՝ լեզուն, կրոնը, ավանդույթները, սովորույթները, որովհետև հատկապես սրանց մեջ են երևում ազգի հոգևոր ներդրումը: Գերմանացի փիլիսոփա Վունդը առանձնացնում է երեք կարևոր ոլորտ, որոնցում ավելի լավ է ընդգծվում ազգի ոգին: Ղա առասպելն է, լեզուն և սովորույթները: «Լեզվում իրենց արտահայտությունն են գտնում ազգային ոգում ապրողների պատկերացումները և նրանց փոխադարձ կապի օրենքները: Առասպելներում սպառվում են այդ պատկերացումների նախնական բովանդակությունները, որոնք հիմնավորված են զգացմունքներով և տպավորություններով: Սովորույթները այդ տպավորություններից ու պատկերացումներից ծագած կամքի ընդհանուր ուղղությունն են»¹⁹: Ռուս փիլիսոփա Գ.Շպեդը համաձայնվում է այն գլխավոր սկզբունքի հետ, որ այն, ինչ անում է ազգը ազգի համար, սահմանափակվում է, ոչ թե ընդհանուր տնտեսության, լեզվի, ընդհանուր ծագման, այլ բացառապես այնպիսի պայմաններում, որ էթնոսի անդամները միմյանց նայում են որպես ազգի: Ազգային բնութագիրը ազգի հոգևոր ներդրումն է, որը ծագում է նրա սոցիոմշակութային փորձից, ավանդույթների միասնությունից, տվյալ էթնիկ հանրության գաղափարներից, արժեքներից, կարծրատիպերից:

¹⁸ Гнатенко П.И. Национальный характер; мифы и реальность. Киев, Виш. шк., 1984. с.15.

¹⁹ Вундт В. Проблемы психологии народов. В книге: Преступная толпа. М., 1998. с32.

